ՄԱՆՐԱԼՈՒԲՔ

Իգուանոզօն.—Իգուանոզօն այն զարմանալի կենդանիներից մեկն է, որ վաղուց անյայտացել է երկրի երեսից և միայն նորա մնացորդները, կմախքի մասերը գիտնականները գտնում են այժմ հողի տակից և իրար կցելով տալիս են շատ հին ժամանակներում գոյութիւն ունեցող մի հրեշի պատկեր, որ նեանքի ներկայ պայմաններում գոյութիւն չունի. նորա ապրել են հնում, որովհետև երկրի պայմանները հին ժամանակներում համապատասխան են եղել նրանց կազմուածքին, փոխուել են ապրելու պայմանները և այդ տեսակի կենդանիները թուլացել, սպառուել և անյայտացել են երկրի երեսից։

Անգլիայում 1822 թ. մեծ և փոքր Իգուանոզօնների ոսկորներ գտնուեցան։ Գիտնականները մի անգամից չկարողացան որոշել թէ այդ ոսկորները ինչ կենդանու են պատկանում։ սկզբում կարծում էին, թէ որ և է կաթնասուն խոշոր կենդանու ոսկորներ են, որովհետև խիստ նման էին կովի, ձիու, եղջերուի և վերջապէս ժամանակի որ և է խոշոր կենդանու ոսկորներին, բայց վերջը միայն խոշոր մանեցին, որ մի տեսակ սողունի ոսկորներ են, այնպիսի սողունի, ինչպես են կոկորդիլոսները. մողեսները ևլն. ոսկորների կազմուածքից երևում էր, որ այս սողունը խոշոր կեր է եղել, նրան անուանեցին իգուանոզօն, որովհետև նրա ոսկորները նման էին Իգուանի՝ ցամաքային մողեսի ոսկորներին. այդպիսի մողեսներ յայտնի են Հնդկաստանում և Ամերիկայում, որ կերակրում են տերևներով։

1834 թ. գտնուեցան փոքր իգուանոզօնի կմախքի կոտորներ, որով ապեքի համոզուեցան, որ այդ սողունը կերակրուելիս է եղել տերևներով և խարխ ճիշերով, որ պոկել է իր երկար ու մնոտ լեզուով և որոճացել ոսկորներով։

Կարծում են որ իգուանոզօնները ապրել են անտառով ծածկուած տեղերում, արմաւների երկրում կամ թէ չէ այնպիսի ճահիճներում, որտեղ բուսականութիւնը շատ ճոխ է եղել։

Քննութիւնը ցոյց է տալիս, որ նորա չեն ապրել այն վայրերում, ուր գտնում են նրանց կմախքները նրանց մնացորդների հետ միասին գտնուս են գալիս ծառերի կոճղներ և ուրիշ մնացորդներ, որ գետերի հոսանքը զարկ ընթացքում քշել բերել է հեռու տեղերից և լցրել երկրի մակերևոյթի ուելի փոս տեղերը. այդ մնացորդները ստիպել են ճահիճների յատակը ժամանակի ընթացքում բարձրացել են ճահիճները և այդ մնացորդները թաղուել են հողի տակ և այժմ էլ հենց այդպիսի տեղերից են գտնում շատ իգուանոզօնների կմախքի կոտորներ և անթիւ ուրիշ մեծ ոսկորներ։

1878 թուին Բելգիայում մի քարածուխի հանքի մէջ համարեա 350 մետր խորութեան մէջ գտնուեցան 23 իգուանոզօնի ոսկորներ. Խիստ մեծ դժուարութեամբ էին կարողանում քարի բեկորների միջից հանել այդ ոսկորները, այնպէս որ միևչև 1883 թ. հազիւ 15 կմախքի համար նիւթ կարողացան ժողովել։ Նոյն թուին Բրիւսելի թանգարանում (музей) ապակեայ մեծ պահարանների մէջ ի ցոյց դրուեցան հրէշների երկու կմախք, որից կարելի էր պարզ գաղափար կազմել այդ հրէշների կազմուածքի մասին։

Դոցա յետևի ոտները երկքական մատն ունին. այդ ոտների մեծութիւնից կարելի է ասել, որ իգուանոզօնը փոքր մեծութիւն է ունեցել և մատ է եկել իւր յետևի ոտների վրայ։ Առջևի ոտները աւելի կարճ են և փոքր, վերջանում են հինգ մատներով. բուռն մատը վերջանում է բաւական երկար և սուր ոսկրով, որ խիստ նմանութիւն ունի, արդիօք այդ ծառայել է իրրև զէնք, թէ ծառերից ճիւղեր պոկելու համար, յայտնի չէ. Նոցա կաշին եղել է կամ լերկ և հարթ կամ թեթև ծալքեր է ունեցել։ Ոտնաների առաջին մասը զուրկ է եղել կտրիչներից, ենթագրում են, որ նրանք իրենց ժամանակի մեծ մասը անց են կացրել ջրի մէջ, ուր նոցա կանոնաւոր շարժումները բաւականին նպաստել է նրանց զօրեղ պոչը։ Հաղալու ժամանակ գործ են դրել կամ երկու զոյգ վերջաւորութիւնները, կամ միայն յետևի ոտները։

Այնպիսի հրէշներ, ինչպես իգուանոզօնն է, շատ են եղել երկրի վրայ։ Եւրոպական մեծ թանգարաններում կարելի է տեսնել այդպիսի վաղուց մեռած և անյայտացած կենդանիների մնացորդների հարուստ ժողովածուներ, որոնցով կարելի է գաղափար կազմել, թէ ինչպիսի կենդանական աշխարհ էր ներկայացնում երկիրը շատ հին ժամանակներում։

* *

Հողն իբրև կերակուր.— Ճանապարհորդները պատմում են, թէ հարաւային Ամերիկայում, Օրինոկո գետի վերին հոսանքում ապրող հնդիկները հող են ուտում, որ և նրանց սակաւակենդութեան պատճառ է դառնում. հող ուտելու վնասակար սովորութիւնը մտել է նրանց մէջ ոչ թէ անցգի պակասութիւնից, այլ առանձին հակումից։ Հնդիկներն ամեն տեսակի հող չեն ուտում, նոքա լաւ են որոշում ուտելու հողը. սկզբում համն են առնում, և երբ տեսնում են թէ հարկաւոր սորը պակասում է՝ չեն ուտում. Այն հողը, որ նրանք ուտում են գեղնագոյն կաւից է, որի մէջ լինում է երկաթի թթուածք և բուսական փոշիացած մնացորդներ. Ուտելուց առաջ թրջում են, ապա ձեռի վրայ պահում, կամ թէ չէ տապակում են իւղի կամ ձկան ճարպի մէջ. Բայց այսպէս պատրաստելուց յետոյ էլ այնուամենայնիւ հողը չի կորցնում իր բնական համը։

ՀՍՌՀ-ՍՍՐ